№ 176 Նոյեմբերի 16 Շաբաթ 1883 Նոյեմբերի 16 Շաբաթ № 176

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
„ՄՇԱԿ“
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1884** ԹՎԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆեյլիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ ՌՈՒՍ և ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ։
ՀԱՍՑԷՆ ՀԱՐՑՆԵԼ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ 2—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Դուշէթից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գործակատարի յիշատակարանից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴՈՒՇԷԹԻՑ

Նոյեմբերի 8-ին

Շատ անգամ է պատահել ինձ կարդալ մեր պարբերական թերթերին դաւառներից թղթակցող պարոնների այնպիսի յօդուածներ, որոնք իսկապէս զանգատ կարելի է համարել իրանց անել վիճակի։ Նրանք շատ անգամ տեսնելով այս կամ այն անհատի կամ ամբողջ մի խմբի վատ գործերը, ի վնաս ընդհանրութեան, կամ հասարակութեան գործած գեղծումները, ստիպված են լինում լռել, իսկ եթէ չեն գրում, խիղճը տանջում է. երկար տանել չեն կարողանում նրանք այդ դրութիւնը, մանաւանդ որ ենթադրում են յիշեալ անհատներից ընդհանրութեան հասանելիք ահռելի վնասները և նորա վատ հետևանքները. վճռում են վերջապէս հանդէս գուրս գալ մեր լրագրութեան մէջ և հանդէս գուրս բերել նրանց վատ արարմունքները, գեղծումները։ Սակայն այս քայլը նրանք անում են միայն այն դէպքում, նախ, երբ, ինչպէս ասեցի, այլ ևս խղճի ձայնին դիմանալ չեն կարողանում և երկրորդ՝ երբ դորանով վստահանում են և յանձն առնել այն ամեն զրկանքներն ու նեղութիւնները, որ պիտի հանդիպեն այն անհատների կողմից, որոնց գործերը մի առ մի մերկացրել են իրանք։ Որովհետև այն կեղծ անունը կամ երեք աստղը, որոնց տակ հանդէս են գուրս եկել իրանք, երկար թաքցնել չեն կարողանում յիշեալ անհատների աչքից։ Այդ բանը մեծ դիւրութեամբ կատարվում է մանաւանդ փոքրիկ քաղաքներում և գիւղերում, ուր կարդացողներին և գրողներին, դժբաղդաբար, մատներով կարելի է համարել։

Սակայն նրանց վիճակը, մեր գիւղական ուսուցչաց վիճակի հետ համեմատելով, դարձեալ բաղդաւոր կարելի է համարել, այն ուսուցչաց, որոնց մեր պ. պ. թեմ. տեսուչները մի մի գիւղաքաղաքի կամ գիւղի մէջ նշանակելով, պատուիրում են նրանց Զաքարիայի պապանձման ենթարկվել, ոչ մի դէպքում չը թղթակցել այս կամ այն լրագրութեան, որով և առիթ տուած չեն լինի իրանց զանազան կուսակցութեանց պատկանելուն, հետևապէս և իրանց ստանձնած ուսումնարանաց գործերը ճշտիւ և բարեխղճաբար կատարելուն դէմ մեղանչած։ Ահա այն յարգելի պատճառը, այն զօրեղ ձեռքը, որ մեր գիւղական ուսուցիչների խղճին ես տիրում է և նրանց ձայնը ես անլսելի է անում, խեղդում։

Այժմ մի քանի խօսք կասեմ այն բանի մասին թէ՝ տեսուչների յիշեալ պատուէրից որքան մեծ վնաս է կրում այսօր նոյն իսկ մեր երկրի ուսումնասիրութեան հարցը մեղանում։

Ո՞վ չը կարդաց մեզնից վերջին ժամանակներս մեր լրագրութեան մէջ ոչ միայն գիւղացու բարոյութեան, այլ և բոլոր մարդկութեան համար նշանաւոր «Համայնական հարցերին» նուիրված այն բազմաթիւ յօդուածները։ Այո, շատերը կարդացին, բայց ճիշտ է և այն, որ շատերն էլ չոտով մոռացութեան տուին նորանց, այնպէս որ այդ հարցերը լոկ հարցեր էլ մնացին թղթի վրա։ Եւ ճշմարիտ, ով արդեօք մեզնից մինչև օրս բաւարարութիւն տուեց այդ խնդրին, ով մեզնից իր օրուայ ազատ ժամերից մի քանիսը նուիրեց այդ նշանաւոր հանելուկների լուծելուն, պարզ բան է որ ոչ ոք։ Այն ինչ նրանց առաջարկողները, յայտնի բան է, մեզնից մինչև օրս էլ դեռ սպասում են նրանց լուծումը։

Եթէ մինչև այժմ էլ պատահել է մեզ այս ինչ կամ այն ինչ ճանապարհորդի այս կամ այն գիւղից գրած պատահական թղթակցութիւնները կարդալ, դրքա էլ այնքան հարևանցի, թեթև կերպով են վերաբերված եղել այդ հարցերին, որ շատ քիչ բաւարարութիւն են տուել նրանցով հետաքրքրվող անձանց։ Բացի այդ, եթէ մի աչքի ընկնող թերութիւն էլ այժմեան մեր գիւղերից երբեմնապէս երևան եկող թղթակցութեանց մէջ նկատվում է՝ այդ նրանց սարսափելի կերպով միատեսակութիւնն է։ Այդ մարդիկը կարծես հէնց լրագրութեան միջոցով որ ամսին, որ թվին, ինչ գիւղ այցելելն են անմահացնել ուզում, գրուածքի մեծ մասը իրանց ճանապարհորդութեան ժամանակ պատահած պատահական երևոյթներին նուիրած լինելով. թէ՝ արեգակը այդ ժամանակ կիզիչ էր, թէ ամպերի տակ էր թաղնված, որ գիւղը կամ կայարանն էին հասել իրանք, որ գիշերուայ թաղումին՝ լուսինը՝ իր արծաթափայլ ճառագայթները արևելքից ձգել էր գեղաղուարթ, կոյս անտառով պատած ձորակը, որ իրանք ձիերից իջած, սառը աղբիւրների տակ իրանց արևակէզ երեսներն էին զովացնում կամ լողանում։ Կամ եթէ մի բան էլ գրում են իրանց այցելած գիւղերի մասին, դրքա էլ այնպիսի մի սովորական, ընդհանուր երևոյթների մասին են լինում գրուած, որ համարեա թէ ոչ մի գիւղ զերծ չէ այսօր այդ յատկութիւններից. օր. թէ՝ տները այս ինչ գիւղի մէջ գեղանափոր էին և նրա երևացող պատերը աթարով թիված։ Ճանապարհները ծուռ ու մուռ էին և սարսափելի կերպով աղտոտած և այլն և այլն, *) բայց հէնց որ հարցը գալիս է ժողովրդի պարապմանց, նրանց սովորութեանց, նրանց հոգատրութեան հարցերին, նրանք խոյս են տալիս, բաւականանում են մի քանի հարևանցի ակնարկ ձգելով նրանց վրա և մի քանի կարճ, լակոնական ոճով իրանց միտքը յայտնելով։ Այն ինչ հէնց ամենակարևոր, և լուրջ ուշադրութեան առնելու խնդիրները սոքա են։

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ծագում թէ՝ ով աւելի յարմար միջոց ունի արդեօք յիշեալ հարցերին լրջօրէն վերաբերվել և նրանց բաւարար կերպով լուծումն տալ,—ոչ ոք, եթէ ոչ մեր գիւղական ուսուցիչները, կը պատասխանենք մենք, որոնք ամեն կողմից դրա համար մեծ յարմարութիւններ ունեն։ Բայց ով գիտէ, մեր բանասէրներից քանի-քանիսը չեն դատապարտել մեզ՝ գիւղական ուսուցիչներիս մինչև օրս յիշեալ հարցերի վերաբերութեամբ լռութիւն պահպանելնուս համար,—անշուշտ շատ շատերը։ Եւ շատ իրաւացի էլ կը լիներ նրանց մեզ տուած այդ նա-

*) Երևի խեղճերը Թիֆլիսի Հաւլաբարի, Միջի փողոցի կամ Խարբուխի թաղերը չեն տեսել։ Թող իմանան, որ սա դեռ Կովկասի մայրաքաղաք համարվող Թիֆլիսն է։

Ծ. Հ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

V

Անցել էր մի քանի ամիս. ես շարունակում էի ամենայն առաւօտ վաղ գնալ մագաղին և երեկոյեան վերադառնալ Մակար աղայի հետ տուն։ Բաւական ընտելացել էի ես իմ գործակատարական պաշտօնին. արշինով չափելը, մուշտարիների հետ քաղաքավարութեամբ խօսելու, կամ, ինչպէս Մակար աղան ասում էր, «նրանց պոչից բռնելու և բաց չը թողնելու» հնարը և ուրիշ իմ պաշտօնին վերաբերեալ հարկաւոր բաները ես բոլորովին սովորել էի։ Գրիգորը ինձ վրա մինչև անգամ զարմացել էր. նա խիստ գովում էր իմ աշխատասիրութիւնը, ընդունակութիւնը և ասում էր, թէ շատ բաներ, որ ինքը սովորել էր մի քանի տարիների ընթացքում, ես սովորում եմ մի քանի ամիսներում։ Միւս գործակատարները նոյնպէս հաւանում էին ինձ, նա մանաւանդ նրանք գովում էին իմ արագաշարժութիւնը, որի պատճառով իմ անունս դրել էին «հօրդա խաչի», «այսենքը» արագընթաց խաչի։ Այդ մականունը մինչև այսօր էլ իմ վրաս մնացել է և ես երբէք չեմ նեղանում, որովհետև նա նշանակում է, որ ես ծոյլ մարդ չեմ։ Բայց ամենից աւելի ես աշխատում էի Մակար աղայի ուշադրութիւնը գրաւել ինձ վրա, ձեռք բերել նրա կողմից քիչ թէ շատ համակրութիւն և այդ նպատակով ես ամենայն ջանք գործ էի դնում, որ ոչ մի սխալով չը զրգռեմ նրա բարկութիւնը դէպի ինձ, այլ, ընդհակառակը, որքան կարելի է սիրելի դառնամ նրա աչքում։ Ես ուսումնասիրում էի նրա բոլոր կողմերը, աշխատում էի իմանալ նրա բոլոր յատկութիւնները, որպէս զի նրանց համեմատ վարվեմ նրա հետ։ Ինչ տեսակ խօսակցութիւն, ինչ տեսակ շարժողութիւն, մինչև անգամ ինչ տեսակ ուտել, խմել, նստել, վերկենալ, որ նրան հաւանելի էր, նոյն տեսակ էլ ես էի աշխատում խօսել, շարժվել, նստել, վերկենալ և այլն։ Ես այդ ամենը աչքի առաջ ունէի, որովհետև ամեն օր տեսնում էի, թէ ինչպէս Մակար աղան բարկանում էր գործակատարների վրա, ամենաչնչին սխալների համար և շատ անգամ սպառնում էր արձակել պաշտօնից այն գործակատարին, որը գործած էր այդ չնչին սխալը. օրինակ, մի օր նա մէկին մի քանի ապտակներ տալուց յետոյ քիչ մնաց չը դուրս արեց մագաղինից նրա համար, որ խեղճը սխալմամբ մահուդի մի կտորը դրել էր չիթերի շարքում։ Մի խօսքով չափազանց մանրակրկիտ և բարկացող մարդ էր Մակար աղան. հարկաւոր էր մեծ զգուշութիւն նրան դուր գալու համար և ես ամենայն կերպ աշխատում էի զգոյշ վարվել նրա հետ։

Այդպիսով փոքր առ փոքր ինձ յաջողվեց Մակար աղայի ուշադրութիւնը գրաւել ինձ վրա և օրէցօր հաւանելի դառնալ նրա աչքում։ Նա հետզհետէ սկսեց ինձ յանձնել այնպիսի գործեր կատարելու, որոնք գործակատարի կողմից պահանջում էին քիչ թէ շատ հաւատարմութիւն. օրինակ, փող էր տալիս այս կամ այն վաճառականի մօտ տանելու կամ փօստ ձգելու, ուղարկում էր զանազան տեղերից ապառիկներ ստանալու և այլն։

Մակար աղան ինձ համար մի ձեռք նոր հագուստ էր առել, որովհետև իմ առաջվայ հագուստը այնքան պատառոտված էր, որ նա իր անուանը լայեաղ չէր տեսնում այդ ցնցոտիների մէջ ինձ տեսնել մագաղինում։ Բաւական փոխվել էի ես այդ նոր հագուստի մէջ, էլ առաջվայ խաչին չէի և ամենայն անգամ մագաղինում դրած ահագին հայելուն մտիկ տալով, ինքս ինձանով հիանում էի և զարմանում։ «Ահա, թէ ինչ ասել է փող—մտածում էի ինքս ինձ հայելուն մտիկ անելով. նա մարդուս բոլորովին փոխում է. ինչպէս էի առաջ և ինչպէս եմ այժմ. հիմայ ով կարող է ինձ ճանաչել, որ ես կօշկակար Սարգսի տղան եմ. չէ, ով ինչ ուզում է թող ասէ, ես կասեմ որ փողը շատ լաւ բան է և նրան ձեռք բերելու համար ամենայն տեսակ միջոցներ գործ դնել արժէ, հարկաւոր է Մակար աղայից սովորել փող աշխատելու եղանակը։ Սակայն ինչպէս ձեռք բերել փող աշխատելու հնարը. Մակար աղան իր խելքով չէ աշխատում փողը, այլ նոյն իսկ փողի միջոցով. ուղիղ էր ասում հայրս թէ «փողը փող է աշխատում, իսկ դաշտ տղան գլուխն է քորում»։ Բայց, ինչ և իցէ, շտապել չէ հարկաւոր, ես դեռ փոքր եմ և ժամանակ շատ կայ առաջիս և կարող եմ մի օր ես էլ մարդ դառնալ։

Մակար աղան սովորութիւն ունէր մագաղինում բացված հակերից մնացած թոկերի կտորտանքը, փսիաթները կամ կտորտված արկղները էժան գներով ծախել գործակատարների վրա, որ սրանք աշխատանքով ծախելով շահվին։ Սովորաբար այս շահը Մակար աղան յանձնումէր այն գործակատարներին, որոնք երկար տարիներ հաւատարմաբար ծառայել էին իր մօտ։ Այդ բանը շատ շահաւէտ էր. պատմում էին, որ շատ գործակատարներ այսպիսով զանազան մեծ մագաղիններում բաւական գումարներ են դիզում։ Մակար աղայի մագաղինում այդ արտօնութիւնով օգտվում էին Գրիգորը և մէկը մնացեալ գործակատարներից, որը ամենից հինն էր, ուրեմն յոյս դնել եկամուտի այդ աղբիւրի վրա իմ կողմից ապարդիւն էր, բայց և այնպէս պակաս չէի մտածում նրա մասին և նախանձում էի Գրիգորին և միւս գործակատարին, որոնք օգտվում էին մի այդպիսի եկամուտով։ Պէտք է ասած, որ այն օրից, երբ ես մտել էի աղա Գուլամանցների մագաղինը, մի անգամ իմ մէջ կենդանութիւն ստանալով չահասիրական ոգին, օրէցօր քանի գնում այնքան զօրանում էր նա, այնպէս որ մի քանի ամիսներում նա ինձ այնտեղը հասցրեց, որ ես պատրաստ էի դիմել ամենայն տեսակ միջոցների,

խաթինքը, եթէ միայն մեր լռութիւնը զուրկ լինէր յիշեալ յարգելի պատճառից:

Մնում է մեզ այժմ մի քանի խօսք էլ այն կէտի վերաբերութեամբ ասել թէ՝ մեր գիւղական ուսուցիչների թղթակցելուց կարող է ուսումնարանի գործը խանգարվել և նրա ուսուցչի զանազան կուսակցութեան պատկանելուն առիթ տալ, թէ՝ ոչ: Առաջինի վերաբերութեամբ այսքանը միայն կասեմ, որ գիւղական ուսուցիչը ուսումնարանապատկան պարտականութիւնները կատարելուց յետո, էլի շատ ազատ ժամեր է ունենում. թղթակցելու համար՝ այդ ժամերից նա միայն կարող է օգուտ քաղել: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին թէ՝ դորանով նա առիթ տուած կը լինի իր այս կամ այն կուսակցութեան պատկանելուն, կասեմ, որ դա ոչ թէ մի թղթակցող ուսուցչի, այլ ամեն մի բարեխիղճ թղթակցի պարտականութիւնը պէտք է լինի՝ կարելոյն չափ հեռու պահել իրան անձնականին վերաբերեալ հաշիւներից: Նրա սուրբ պարտականութիւնը պիտի համարվի անձնական պատրուակով ընդհանուրի, հասարակութեան շահերը չը վտանգել, վնասի չենթարկել, որ, հակառակ դէպքում, լրագրական խօսքի նշանակութիւնը վայր ձգելուց զատ, պատասխանատու մնացած կը լինէր ընդ միշտ իր խղճի առաջ:

Այս ընդհանուր պատասխանատուութիւնը մեր՝ ուսուցիչներիս վրայից վերցնելուց յետո, յոյս ունեմ, որ ես էլ Դուշէթի և նրա գիւղօրէից վերաբերութեամբ տալիք մի քանի տեղեկութիւններովս կարողանամ մասամբ յիշեալ հարցերին բաւարարութիւն տալ:

Գ. Խօջամիրեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շարունակում ենք ստանալ այլ և այլ քաղաքներից Բաֆֆիի քսան և հինգամեայ յօբելեանի առթիւ վերին աստիճանի համակրական նամակներ: Այս տեսակ նամակներ ստացանք Թիֆլիսից, Երևանից, Ախալքալաքից, Մօսկվայից և այլն:

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը: «Առինջ գիւղը, որ գտնվում է Երևանի արևելա-հիւսիսային կողմը, 10 վերստ հեռաւորութեամբ, վերջին ժամանակ անդադար կռիւներ ու անբաւականութիւններ ունի գիւղին հարևան վանքապատկան Գետարգել անուանված հողերի կապակցութեամբ: Առինջ գիւղի բնակիչները աշխատում են վանքապատկան հողերին տիրել»:

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅ գիւղից մեզ գրում են, որ այդտեղի ուսումնարանը, համաձայն թեմական վերատեսչի, պ. Աղայեանցի կարգադրութեան, բացվեցաւ սեպտեմբերի 1-ին: Աշակերտների թիւը հասնում է 100-ի: Թեմական տեսուչը, տեսնելով որ մի ուսուցիչ դպրոցի համար անբաւարար է, կարգադրեց հրաւիրելու և մի երկրորդ ուսուցիչ: Հրաւիրված երկու ուսուցիչներն էլ տեղացիներ են և Ներսիսեան դպրոցում իրանց ուսումը աւարտել են: Թղթակիցը յոյս է յայտնում, որ հասարակութիւնը կօգնէ դպրոցին և ուսուցիչների գործունէութիւնը ամեն միջոցով կը քաջալերէ:

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը: «Ցանկալով հրատարակել մի գրքոյկ, «Քնարիկ» անունով, խնդրում եմ պ. պ. բանաստեղծներին և գրողներին ուղարկել ինձ իրանց բանաստեղծութիւնները հետևեալ հասցէով. Շամախի, հոգևոր դպրոցի ուսուցիչ Յակոբ Ճաղարբէգեանցին»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ պ. Թ. Մեհերեանց խնդրում է մեզ տպել հետևեալը: «Ախալցխայից մի պարոն տեղեկացնում է մեզ, որ թարգմանել է սկսել «Լբրտեսներ» վէպը, հեղինակութիւն Բրո: Ես այս վէպի պրոլոգը և առաջին մասը արդէն վաղուց թարգմանել եմ և այժմ սկսած ունեմ և երկրորդ մասը: Որովհետև պարոնը նոր է սկսում, նրան աւելի հեշտ է դադարեցնել իր աշխատանքը, քան թէ ինձ: Անցեալ տարի ես սկսելով թարգմանութիւնը, անօգուտ համարեցի լուր տալ դրա մասին, կարծելով, թէ ուշադրութիւն դարձնող չի լինի այդ գրքի վրա»:

—

Մեզ հաղորդում են հետևեալը: «Այս օրերս Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցի ուսուցիչ Արսէն քահանայ Բագրատունին դիմում է վերոյիշեալ ուսումնարանի աշակերտներին մի բաժանորդագրական թերթով և համարեա ստիպմամբ պահանջում է աշակերտներից մի մի ռուբլ կամ յիսուն կոպէկ գրվել յօգուտ նոյն դպրոցի երկու աշակերտների: Բարեգործ տէր հայրը օգնութիւն է խնդրում այն չքաւոր աշակերտներից, որոնք ամսական հինգ ռուբլիով են ապրում Թիֆլիսի պէս քաղաքում շատ անգամ կտոր հաց չունենալով իրանց քաղցը յագեցնելու համար: Եւ ահա այդպիսի աշակերտներից է հաւաքում բարեգործ տէր հայրը իր նըվիրատուութիւնները, չը նայելով որ աւելի հեշտութեամբ կարող էր իր նպատակին հասնել իր հարուստ ժողովրդին դիմելով»:

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ մեզ գրում են հետևեալը: «Ղարսից 50 վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ, Կարինի ճանապարհի վրա գտնվում է Սարիղամիշը Սօղանլուի անսահման և խիտ անտառներով շրջապատած: Սարիղամիշը իր գեղեցիկ ջրով, յարմար դիրքով և առողջաբար կլիմայով գրաւեց Էլիսաւէտօպոլեան գունդի վարչութեան ուշադրութիւնը, որը ռուս-թիւրքաց պատերազմից յետոյ հաստատեց իր բնակութիւնը Սարիղամիշում: Այդ տեղը, Օսմանեան տիրապետութեան ժամանակ, լեռնաբնակ ասաղի և քուրդ աւազակների որջն էր, որոնք իրանց աւազակութիւնները և մարդասպանութիւնները կատարում էին ամենայն վըստահութեամբ, պատսպարան ունենալով անտառի քարաժայռերի այրերը և անդունդների խորքերը:

Սօղանլուի անտառը հարուստ է նոյնպէս զանազան թռչուններով և վայրենի կենդանիներով, բայց աւելի աչքի են ընկնում բազմաթիւ եկեղեցիները, վանքերը և բերդերը, որոնք կիսաւեր դրութեան մէջ են գտնվում: Այս 5—6 տարիների ընթացքում հայերը այլ և այլ տեղերից Սարիղամիշ գալով, հիմնեցին առևտրական տներ և արհեստանոց, ունենալով իրանց առևտրական ապահովութեան աղբիւր՝ զօրքերը: Հայերը եկեղեցի չունեն, իսկ զօրագունդը մի փայտաշէն եկեղեցի ունի: Այս տեղը, իբրև երկու տէրութեանց սահմանագլուխ, երթևեկն էլ անպակաս է, որովհետև տաճկահայոց, մանաւանդ կարնեցիների դէպի Ռուսաստան դիմելու դուռն է Սարիղամիշը: Գարնանը կարնեցիք խումբերով գալիս են աշխատելու այս կողմերը, բայց դեռ ևս կարնեցին սովոր չը լինելով երկար և ձիգ տարիներ օտար երկրներում թափառել, անմիջապէս նոյն տարվայ աշնանը դարձեալ նոյն խումբերը վերադառնում են իրանց տները»:

—

«Новости» լրագրում կարդում ենք, որ Ս. Պետերբուրգում մեծ հանդիսով է տօնվելու այն մարդու հարիւրամեակը, որը առաջին անգամ օդապարիկով բարձրացել է: Սօլիոնի Գօրօդոկի ահագին լսարանը (աուդիտօրիա) զարդարված կը լինի վէնդելներով, դրօշակներով և այրեցեալ գօտիների բուսականութեամբ, մի և նոյն ժամանակ ամբիոնի վերև, դափնեայ պսակների մէջ, զետեղված կը լինեն 1783 և 1883 թուերը: 900-ից աւելի տոմսակներ են բաժանված, բայց տօնախմբութեանը ներկայ լինել ցանկացողները խիստ շատ են: Նիստը բանալուց յետոյ, կախարդական լապտերի օգնութեամբ, քաթանի վրա՝ մութը պատկերի ձևով, ցոյց կը տրվեն առաջին օդագնաց Մօնգոլֆիէրի պատկերը և այն օդապարիկի նկարը, որով բարձրացաւ նա: Այսօր նոյեմբերի 6-ին, տեխնիկական ընկերութեան անդամների ներկայութեամբ, յօբելեանի տօնախմբութեան կրկնութիւն արին և բոլոր պատկերները շատ յաջողվեցան:

—

«Русскій Курьеръ» լրագրին հաստատ աղբիւրից հաղորդում են, որ ֆինանսների մինիստրութիւնը անհրաժեշտ է համարում Անդրկովկասեան մաքսային մի քանի հիմնարկութիւնները տեղափոխել ուրիշ կէտերում, որոնք աւելի համապատասխանում են առևտրական և մաքսային շահերին: Այդպիսի մի առաջարկութիւն ֆինանսների մինիստրը արդէն ներկայացրեց պետական խորհրդին: Մաքսային շահերի համար որպէս ամենաանբարեյաջող տեղ, մինիստրութիւնը մատնացոյց է արել Կարսի կարանտինեան մաքսային գրասենեակը, որ գտնվում է սահմանից մօտ 100 վերստ տարածութեամբ հեռու: Ի նկատի առնելով այն, որ ապրանքային կարավաններին ուղեկցելը այդպիսի մեծ տարածութեան վրա վնասում է մաքսային շահերին, նպաստելով կօնտրաբանդային և զեղծումներին, ֆինանսների մինիստրը մի ջնորդում է, կովկասեան տրանզիտի փակման պատճառով, տեղափոխել մաքսատները Կարսից Կարաուրգան: Բացի դրանից, ի նկատի առնելով օտար ապրանքների տրանզիտի խափանումն, մտադրութիւն կայ կարանտինեան մաքսային գրասենեակը տեղափոխել Նախիջևանից, որը Պարսկաստանի սահմանից 35 վերստ հեռու է գտնվում, ուղիղ սահմանի վրա, Ջուլֆայի սահմանակիցը: Առաջնորդվելով այդ եզրակացութիւններով և ի նկատի առնելով Կովկասեան կառավարչապետի միջնորդութիւնը Երևանեան նահանգում երկաթ նոր կօրդօններ հաստատելու անհրաժեշտութեան մասին, ֆինանսների մինիստրը առանձին կրէդիտ է պահանջում մաքսային վարչութեան մէջ վերոյիշեալ փոփոխութիւններն անելու համար:

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը: «Շաբաթ օր, նոյեմբերի 19-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տրվելու է մի կօնցերտ Թիֆլիսի «Հայոց կանանց բարեգործական» ընկերութեան օգտին: Կօնցերտին մասնակցելու են՝ տիկին Պանչ, Ս. Պետերբուրգի կօնսերվատօրիայի ուսուցչուհի, տիկին Գամբարով, օր. Ախվերդով, պ. պ. Բուխվէցկի, Գօրսկի, Օպօչինին և Տօրիանի: Կօնցերտից յետոյ կը սկսվի պար: Տիկին Պանչ, որ ածում է պիանօի վրա, այն անձանց վկայութեամբ, որոնք նրա ածելը լսել են, ունի մի արտակարգ տաղանդ, այնպէս որ նրա ածելը մեծ վայելչութիւն կը պատճառի երաժշտութիւն սիրողներին: Կօնցերտի մասին մանրամասները կը տպվեն առանձին յայտարարութեամբ:

—

Մի խեղճ հայ կին, ալէքսանդրապօլցի կամ ախալցխացի հայ կնոջ հագուստով, երէկ ներկայացաւ մեր խմբագրատունը և խնդրեց մեզ յայտարարել մեր լրագրում հետևեալ աղետալի լուրը: Այդ խեղճ ողորմելին, ապրում է Թիֆլիսի Հալաբար թաղի Շաւի գիւղ ասված մասում և ահա երկաթ ամիս է, որ խեղճ կնոջ միակ որդին, 12 տարեկան տղայ, Մովսէսը, անյայտացաւ: Խեղճ մայրը, որի ազգանունն է Հօռոմսիմ Շահնազարեան, արտասուքը աչքերին խնդրում է մեզ որ յայտնենք այդ աղետալի լուրը մեր լրագրում, գուցէ մի որ և է տեղ գտնվի 12 տարեկան Մովսէս Շահնազարեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Post» լրագրին գրում են Փարիզից, որ այնտեղ հասաւ մարկիզ Ցէնգ, այցելեց մինիստր Ֆէրրիին և խնդրեց նրանից օր նշանակել բանակցութիւնների համար, որպէս զի Տօնկինի հարցի վերաբերութեամբ երկու կողմերն էլ բաւականացնող որ և է վճիռ կայացվի: Այդպիսով դադարեցնելու կամ վատ յատկութիւնը, բայց վերջ ի վերջոյ ամենքն էլ միշտ գալիս էին այն եզրակացութեան, որ Մակար աղան առ հասարակ մաքուր մարդ չէ: Ցիշեալ օրը գործակատարների խօսակցութեան առարկան դարձեալ Մակար աղան էր. ես էլ խառնվել էի նրանց հետ, բայց խօսակցութեանը չէի մասնակցում, այլ մի կողմ քաշված ականջ էի դնում: Զը նայելով, որ մազազինում ոչ ոք չը կար, այսու ամենայնիւ գործակատարները խօսում էին շատ ցածր ձայնով և գրեթէ չչնջումով:

—Գրիգոր, Մակար աղան ինչպէս վերջացրեց իր բաները այն պառաւի հետ—հարցնում էր գործակատարներից մէկը խորհրդաւոր դէմքով:

—Ի՞նչ պառաւի հետ:

—Ա՛յ էն Թոթովեանցի, որի հետ քանի՞ ժամանակ է քաշքշվում են երեք եղբայր աղա Գուլամեանցները մուրհակների մասին:

—Ի՞նչպէս պիտի վերջացնէին, մուրհակները Մակար աղան յետ առաւ և մի կոպէկ էլ նրան չը տուեց, այժմ խեղճ պառաւը ընկել է դառն աղքատութեան մէջ և, ինչպէս ասում են, մինչև անգամ օրվայ մի կտոր չոր հացին էլ կարօտ է մնացել: Խեղճը կաչաղակ է դառել և գիշեր ու ցերեկ այստեղ այնտեղ նստած խօսում է խօսում ոչ ոք նրա խօսքին չէ հաւատում. ասում են, որ կարելի է շատ հոգսից ծերութեան օրերում խելքից էլ զրկվի:

—Հախն է, ինչու էր կեանքի այդ ժամանակը, որ ոտի մէկը այս աշխարհումն է, միւսը գերեզմանի մէջ՝ այնպիսի կեղտոտ բաների մէջ խառնվում, որ այս օրվան չը հասնէր:

—Ի՞նչպէս կարող էր չը խառնվել, երբ ամբողջ կեանքը այդպիսի խաբեբայութիւններով է անցկացրել. առակը ասում է «Ջրի կուժը ջրի կրելում կը կոտրվի»: Խեղճ Աթայեանցի տունը քանդեցին, քանի կենդանի էր, բոլոր փողերը ինչ որ ունէր ձեռից առան և փոխարէնը կեղծ վեքսիլներ տուին պառաւը և աղա Գուլամեանցները, իսկ մեռնելու ժամանակ, այն էլ բարձի տակից գողացան և ողորմելի ընտանիքը թողին մուրացկանութեան մէջ:

—Ասում են մեծ գումարի էին հասնում Աթայեանցի փողերը, մօտ մինչև 75 հազարի:

—Ի՞նչպէս չէ, մուրհակներ գրողն էլ Ռուսաստանի գործակատար Համբարձումն է եղել—ասաց Գրիգորը—նա ինձ պատմել է թէ ինչպէս են ստորագրել այդ մուրհակները աղա Գուլամեանցները և պառաւ Թոթովեանցը:

—Ի՞նչպէս են ստորագրել:

—Ինչպէս պիտի լինի. Մակար աղան վերցրել է գրիչը և իր ձեռագիրը փոխելով, ամենքի փոխարէն ինքը ստորագրել է ջոկ ջոկ ձեռագրով այնպիսի խորամանկութեամբ, որ իր իսկական ձեռքի հետքերը անգամ չէ կարելի եղել նշմարել: Աթայեանցը իբրև հին վաճառական և մի չափազանց միամիտ մարդ տեղեկութիւն էլ չէ ունեցել մուրհակներ գրելու կարգ ու կանոններից: Համբարձումը հաւատացնում էր, որ երբ ինքը մուրհակները մի առ մի տանում էր և տալիս, Աթայեանցը մինչև անգամ նրանց ստորագրութեան էլ մտիկ չէր անում միշտ կրկնելով թէ «աղա Գուլամեանցները ազնիւ մարդիկ են, նրանք ուրիշի փողին թամահ չեն անի, կարելի է նրանց հաւատալ առանց մուրհակների էլ»:

Բայց պառաւ Թոթովեանցի մուրհակները ինչ մուրհակներ են, որ նա ստացած է եղել աղա Գուլամեանցներից—հարցրեց գործակատարներից մէկը:

—Աղա Գուլամեանցները Աթայեանցից փողերը միշտ վերցնելիս են եղել պառաւ Թոթովեանցի միջոցով. նա է իբրև մակլէր գնացել Աթայեանցի մօտ և փողերը ստացել և նրա շնորհով է իսկապէս Աթայեանցը հաւատացել աղա Գուլամեանցներին այդչափ մեծ գումար: Խաբվելով պառաւի խօսքերով, թէ Գուլամեանցները ազնիւ վաճառականներ են և երբէք իրենց թոյլ չեն տայ ուրիշի փողերը ուտել: Թոթովեանցը աղա Գուլամեանցների հետ առաջուց մտածած են եղել Աթայեանցից հանել բոլոր նրա փողերը և տեղը կեղծ մուրհակներ տալ այն պայմանով, որ բոլոր գումարի մի մասը Գուլամեանցները տան Թոթովեանցին: Թոթովեանցը իրան հանելի մասը և բացի այդ իր սեպհական փողերը ընդամենը երեսուն հազար մանէթ յանձնել է աղա Գուլամեանցներին տարեկան 20 տոկոսքով և փոխարէնը նրանցից մուրհակներ վերցրել: Երբ

բած բանակցութիւններին Ֆրանսիայի և Չինաստանի մէջ մի զարկ է տուած: Կառավարչական շրջանները յոյս ունեն, որ այդ բանակցութիւնները խաղաղ վախճանի կը հասցնեն: Այնուամենայնիւ մենքը կարծում են, որ Ֆրանսիան չի հրաժարվի կարմիր գետի դեղտայի գրաւելուց, որովհետև հակառակ դէպքում Գիւյէի հետ կապած դաշնագիրը կը կորցնի իր ոյժը:

—«Temps» լրագիրը անբաւականութեամբ հերքում է անգլիական լրագիրների տարածած լուրերը, իբր թէ ֆրանսիացիները Բարցելօնայի մէջ աշխատում են ցոյց գործել գերմանական թագաժառանգի դէմ: «Temps» նկատում է, որ այդ լուրերը տարածում են գերմանական կենտրոնականները, որոնք կամենում են վնասել իրանց հակառակորդ հանրապետականներին:

—Գերմանական մի քանի լրագիրներ ցաւակցութեամբ ուշադրութիւն են դարձնում այն փաստի վրա, որ ֆրանսիական լրագիրները, երեքի կամ չորսի բացառութեամբ, յիմար ցոյցեր չեն գործում գերմանական թագաժառանգի Սպանիա ճանապարհորդելու առիթով:

—«Köln. Zeitg.» լրագիրը հաղորդում է, որ գերմանական կառավարութիւնը, ներկայացնելով պարլամենտին եկեղեցական վերջին օրէնքը, յոյս ունէր լաւ հետևանքների հասնել, բայց ընդհակառակը այդ օրէնքի առիթով կատարված բանակցութիւնները ոչինչ հետևանքներ չունեցան: Պրուսական կառավարութեան առաջարկած թեթև զիջումները չը ստիպեցին պապական նունիրակին փոխադարձ զիջումներ անել:

—Անգլիական բողոքականները տօնեցին Լիւտերի յիշատակը Էկսետեր-Հալի մէջ: Լրագիրները հաղորդում են, որ հանդիսին մասնակցողները կազմեցին և ուղարկեցին Վիլհէլմ կայսրին հեռաեալ հեռագիրը: «Անգլիական բողոքականները այսօր սրտանց միանում են Գերմանիայի հետ Լիւտերի ծննդեան 400 ամեակը տօնելու համար և խնդրում են Ամենաբարձրեալից տալ Իր օրհնութիւնը երկու երկիրներին, որպէս զի նրանք կարողանան պահպանել Վերանորոգման մեծ սկզբունքները, որոնց համար ձեր մեծութիւնը հզօր պաշտպան է:

—Չինական դեսպանը Ֆոլկեստօնից Փարիզ ուղղորդեցաւ: Լօնդոնի մէջ համոզված են, որ չինական կառավարութիւնը պաշտօնապէս պաշտպանելով մարկիզ Ցէնգին Տրիկոլի հեռագրի գործի առիթով, մի և նոյն ժամանակ նրան դաղտնի պատուէր տուեց՝ աւելի չափաւոր լինել և զիջումներ անել:

—Գէլդ-հալի մէջ, լորդ-մէրի ճաշկերոյթի ժամանակ, Գլադստօն յիշեց Սուէզեան երկրորդ ջրանցքի նախագիծը և յոյս յայտնեց, որ Լէսէպս համաձայնութիւն կը կայացնի անգլիական առևտրականների հետ: Լէսէպս իր կողմից բաւականացուցիչ պատասխան տուեց: Անգլիական լրագիրները զանազան կերպով վերաբերվեցին այդ պատասխանին: «Standard» եզրակացնում Լէսէպսի պատասխանից, որ նա ձգտում է նպաստել անգլիական ծովագնացութեան զարգացմանը: Ընդհակառակը «Times» լրագիրը առաջ է բերում Անգլիայի անվիճելի և գերիշխանական իրաւունքը Սուէզի ջրանցքի վրա, որովհետև Անգլիան տիրում է Հնդկաստանին և հովանաւորում է Եգիպտոսին: Համաձայնութեան կայացնելը բաւական դժուար է և անգլիական առևտրականները կը յիշեցնեն Լէսէպսին սուլթանի պահանջը, որ նա աշխատի նոր կօնցեսիա ստանալ անգլիական կառավարութենից և այդ հանդամանքը բաւական արգելքներ կը դնի ֆրանսիական ինժեներների փառասիրութեանը:

—Բէլգրադից աւստրիական լրագիրներին հաղորդում են, որ Զայչարի շրջանից արտաքսված ապստամբների առաջնորդները փախան Կնեաժեվաց, գրաւեցին այնտեղի թնդանօթները և ժամանակաւոր կառավարութիւն հաստատեցին, որի առաջնորդ նշանակեցին արմատական պատգամաւոր Ալէքսի Ստանկօվիչին: Զօրքերը յարձակվեցին ապստամբների վրա, նրանց ջարդեցին և գերեցին Օբրենիչ և քահանայ Մաշինկօ արմատական պատգամաւորներին:

—Իտալական թագաւորը, ընդունելով ֆրանսիական դեսպանին, յայտնեց նրան իր համոզմունքը, որ եւրօպական խաղաղութիւնը չի խանգարվի: Ինչպէս երևում է, իտալական կառավարութիւնը բաժանում է իր թագաւորի համոզմունքը, որովհետև նա չէ կամենում մեծացնել ծովային մինիստրութեան բիւդժեսը:

—«Polit. Corresp.» լրագրին ալբանական Սկուտարիից գրում են, որ Մուստաֆա-Ասիմ-փաշա և սահմանները որոշող մասնաժողովի անդամները Բերատի մէջ սպասում են Կոսսօվօի վալի Աբդի-փաշային չորս բատալիօն զօրքերի հետ, որոնց պաշտպանութեամբ կը կատարվեն աշխատանքները թիւրք-չերնօգօրիական սահմանները որոշելու համար:

—«Post» լրագրին հեռագրում են, որ Մոնտրէօից վերադառնալու ժամանակ ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրս կայցելի Վիէննա:

—Բերլինի «Börsen Courrier» լրագիրը նկատում է հետևեալը ռուսաց արտաքին գործերի մինիստրի Բերլին ճանապարհորդելու և իշխան Բիսմարկին այցելելու մասին: «Ռուսաց կառավարութեան խաղաղասէր և բարեկամական զգացմունքների մասին մենք երբէք չենք կասկածել, ասում է լրագիրը, բայց եթէ այդ մասին մինչև անգամ կասկածանք յարուցվեր, նոյն իսկ Ռուսաստանի շահերը պահանջում են այդ խաղաղութիւնը: Բայց Ռուսաստանի և Գերմանիայի մէջ շատ բաներ կային, որոնք արգելում էին նրանց բարեկամութեանը: Օրինակ՝ դէպի Գերմանիան իր ունեցած ատելութեամբ յայտնի կոմս Իգնատիև և ռուսաց գեներալները, քարոզում էին այդ ատելութիւնը և ակնարկում էին պատերազմի անհրաժեշտութեան վրա որպէս և համայն սլավիանական մամուլը: Ռուսաստանի մէջ նկատեցին Գերմանիայի սառը յարաբերութիւնը և սկսվում են փոփոխութիւններ ռուսաց մինիստրութեան մէջ, որոնք ուրախութեամբ ընդունվում էին գերմանական մամուլից: Ակներև է, որ ռուսաց պետական անձինք անհրաժեշտ համարեցին ազատվել համայն սլավեանական ազդեցութիւնից և աւելի բարեկամական յարաբերութիւններ հաստատել Գերմանիայի հետ: Այդ միտքն էր Գիրսի գործողութիւնների և նրա ճանապարհորդութեան նախագծի հիմունքը: Դա Ռուսաստանի խաղաղ քաղաքականութեան նշան է: Գիրսի ճանապարհորդութիւնը իշխան Բիսմարկի խաղաղասէր քաղաքականութեան հետևանքն է: Թէ պաշտօնական դաշնակցութիւնների և թէ հասարակ համաձայնութեան վերջնական նպատակը Գերմանիայի համար խաղաղութիւնն է: Մի օր կը վերջանան այդ սուտ և անհանդստացնող լուրերը պետութիւնների պատերազմական պատրաստութիւնների մասին և կը պարզվի, որ երկու մինիստրների բանակցութիւնների նպատակն էր՝ որոշել երկու պետութիւնների բարեկամութեան չափը և ոչ թէ—վրճռել արդէն գոյութիւն ունեցող հարցը խաղաղութեան կամ պատերազմի մասին»:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մէկկայի քարոզ: Այս տարվայ ուխտագնացութիւնը դէպի Մէկկա վերջանում է. ուխտագնացութիւնը այս անգամ շարունակվեց հոկտեմբերի 11-ից մինչև 16-ը: Հոկտեմբերի 16-ին խօսվեցաւ վերջնական քարոզը Արիֆի լեռան վրա եօթանասուն հազար ուխտաւորների ներկայութեամբ: Քարոզիչը, որ ծեր չէլես էր Մէկկայից, նստած էր ուղտի վրա և չորս ժամ շարունակ իր կենդանի ամբիոնից պախարակում և յանդիմանում էր մահմետականների աճող անհաւատութիւնը: Նա վերջացրեց քարոզը յորդորելով ժողովրդին ուղղվել որքան կարելի է շուտով, որովհետև աշխարհիս վերջը անպատճառ շատ շուտով կը լինի: Դրանից յետոյ նա գլխից հանեց իր չալման և հրամայեց փռել նրան գետնի վրա, իսկ ուղղափառները սկսեցին գցել չալմայի վրա արծաթէ և ոսկէ դրամներ, մատանիներ և ժամացոյցներ: Երբ ծերունին իջնում էր սարից, ֆանատիկոսները, և նրանց մէջ օֆիցերները և պաշտօնեաները, գետնի վրա ընկան նրա ուղտի առաջ և թոյլ տուին, որ ուղտը անցնի նրանց մէջքների և ծոծրակների վրայով: Միւս օրը մի վաճառական գնեց այդ ուղտը 1,250 ֆրանկով:

* * *

Փարիզից գրում են Վիէննայի «Presse» լրագրին հետևեալը: Վերջին ժամանակներում Շանտիլի ամրոցը, որը մի ժամանակ Լուդովիկոս XIII-ը ընծայել էր կօնդէին և այժմ պատկանում է Օմալեան դքսին, շատ կենդանացաւ: Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրօվիչի և իր ամուսնի ներկայութիւնը Փարիզում առիթ տուեց օրլէանեան ազգատոմի անդամների ընտանեկան գումարմանը, ուր մասնակցում էր նոյնպէս ֆրանսիական թագաւորական տան ժառանգը, Փարիզի կոմսը իր ամուսնի հետ միասին: Փարիզի կոմսուհին տանտիկնոջ դերն ընդունեց իր վրա Շանտիլի ամրոցում: Ամրոցի այցելուները որսի գնացին, որին մասնակցեցին օրլէանեան տան իշխանները, Վլադիմիր և Սերգէյ Ալէքսանդրօվիչ Մեծ Իշխանները, Փարիզի կոմսուհին, Շարտրեան դքսուհին և Օրլէանեան Մարիա և Ամէլիա իշխանուհիները: Ճաշին, Շանտիլի ամրոցում, տիկինները սգազգեստ ներկայացան: Այնտեղ ներկայ էին և շատ ակադեմիկոսներ և սենատօրներ:

* * *

Շերէրի «Ընտանեկան ժամանակագրութիւն»-ի մէջ պատմված է, որ երբ ֆրանսիական վիպասան Բալզակ դեռ ևս յայտնի չէր և անուն չունէր, նա ապրում էր Փարիզի ամենախուլ թաղերից մէկում: Մի անգամ, ուշ գիշերով, փողոցում յարձակվեցաւ նրա վրա մի գող և փող պահանջեց: «Փող էք ուզում», պատասխանեց Բալզակը, «ձեզ դաղտնի կերպով կասեմ, իմ սիրելի, որ ես գրող եմ»: Գողը հասկացաւ, որ գրողից ոչինչ խէր չը կայ և գլուխը քորելով հեռացաւ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 նոյեմբերի: Այսօր Կայսրուհու ծննդեան տօնի առիթով քաղաքը զարդարված է դրօշակներով: 10 ժամին խակիեվսկի մայր-եկեղեցու մէջ հանդիսաւոր ժամասացութիւն սկսվեցաւ, որից յետոյ գոհութեան մաղթանք կատարվեցաւ: Երեկոյեան բոլոր թատրոններում ժողովրդական հիմն կերգվի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ Բէլոսելսկիների տունը Անիչկին կամուրջի մօտ գնել է Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրօվիչ 900,000 ռուբլով:

ՐԻԲԻՆՍԿ, 14 նոյեմբերի: Վոլգայի վրա սառուց է լողում, 4° ցուրտ է: Երեկ ուղեւորվեցաւ Ճանապարհորդական վերջին շոգենաւը:

ՇԱՆԽԱՑ, 14 նոյեմբերի: Այստեղի անգլիական լրագիրը հաղորդում է, որ Նանկինի փոխարքային տուած բօգդիխանի հրահանգների մէջ ասված է, որ ֆրանսիային պատերազմ կը յայտնվի, հէնց որ ֆրանսիական զօրքերը կը յարձակվեն Բէգտանինգի վրա: Բոգդիխան հրամայեց նոյնպէս խիստ միջոցներ գործադրել միջազգային առևտրի համար բաց նաւահանգիստների մէջ կարգապահութիւնը պահպանելու համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ամենայն ինչ վերջացել է, այսինքն Աթոյեանցը մոռել է և պառաւը նրա բարձի տակից աղա Գուլամեանցների և իր անունով կեղծ ստորագրված 75 հազար մանէթի վեքսիլները դողացել է և տուել է աղա Գուլամեանցներին, այն ժամանակ սրանց ոտքը ու ձեռքը բոլորովին բացվել են: Այս անգամ աղա Գուլամեանցները սկսել են մտածել Թոթովեանցի պարտքից էլ մի կերպ ազատվելու մասին: Բայց Թոթովեանցը այնպիսի կակուղ պրտուղ չէ եղել, որ հեշտութեամբ ազատվէին նրանից, նրան խաբելը այնքան հեշտ չէ եղել, որքան Աթոյեանցների նման միամիտներին խաբելը: Աղա Գուլամեանցները շատ են աշխատում, շատ են չարչարվում պառաւի ձեռքից մի կերպ դուրս բերել իրանց 30 հազար մանէթի մուրհակը, բայց չէ յաջողվում. պառաւը նրանց հետ զգուշութեամբ է վարվում: Վերջապէս Մակար աղայի համբերութիւնը հատնում է և նա մի օր խօսք է տալիս իր եղբայրներին շուտով, ինչպէս և իցէ, Թոթովեանցից առնել մուրհակները:

Այդ վճռից յետոյ Մակար աղան մի օր շուկայում պատահում է Թոթովեանցին, ասում է թէ մտադիր է այն օրը իր պարտքը վճարել և խնդրում է նրան, որ երեկոյեան տանը սպասի, ինքը կը բերի փողը և վեքսիլները կը ստանայ: Երեկոյեան Մակար աղան վերցնում է իսկապէս 30 հազար մանէթ փող և գնում Թոթովեանցի տունը: Նա թաշկինակի մէջ կապած փողերը գրպանից հանում է և դնում սեղանի վրա, խընդրելով պառաւին, որ մուրհակները յետ տայ և փողերը ստանայ: Թոթովեանցի աչքերը, տեսնելով փողի կապոցը, շլանում են և նա շուարված հանում է դողդողալով մնդուկից մուրհակը և դնում Մակար աղայի առջևը: Օգտվելով ծերունու շփոթութիւնով և յարմար վայրկեանով, Մակար աղան խլում է սեղանի մուրհակը և փողի կապոցը ու հայդա: Թոթովեանցը առաջին վայրկեանում չէ հաւատում իր աչքերին, բայց յետոյ ուշքի գալով և իմանալով թէ բանը ինչ տեղ է, սկսում է գոռալ թէ իրան կողոպտեցին և ուշաթափված ընկնում է յատակի վրա:

—Բրավո, բրավո, Մակար աղա, լաւ խորամանկութիւն է բանեցրել ես իմ Աստուածը—բղաւեց գործակատարներից մէկը յափշտակված լինելով Գրիգորի պատմութիւնով:

—Ահա ինչպէս է վերջացրել բանը Մակար աղան պառաւ Թոթովեանցի հետ—աւարտեց Գրիգորը իր պատմութիւնը: Այժմ խեղճը մնացել է չոր տափի վրա և չը գիտէ ինչ անէ. դատաստանատուն գնալ չէ կարող, որովհետև ոչինչ գրաւոր կամ ուրիշ փաստեր չունի, որ Գուլամեանցների վրա հաստատէ իր պարտքը, իսկ առանց փաստերի՝ ոչ ոք չէ հաւատում նրա խօսքերին: Հասարակութեան մէջ գանգատվելու ժամանակ ամենքը ծիծաղում են նրա վրա և չեն հաւատում, որ աղա Գուլամեանցները նրան այդքան փող պարտ լինեն և չը վճարեն և ինչպէս հաւատան, քանի որ շատ լաւ ճանաչում են նրան և գիտեն, որ նա իր կեանքում այդքան փող երբէք չէ ունեցել: Իսկ ճշմարիտը խոստովանվելու ասել՝ պառաւ Թոթովեանցը նոյնպէս չէ կարող, որովհետև գիտէ, որ եթէ ճշմարիտը պատմի թէ որտեղից և ինչպէս է այդ պարտքը գոյացել աղա Գուլամեանցների վրա, կարող է իր ծերութեան օրերում խայտառակվել, յայտնելով իր մասնակցութիւնը Աթոյեանցին կողոպտելու մէջ: Այժմ խեղճը մնացել է տանջվելով և գիշեր ու ցերեկ մաշվում է իր գաղտնի ցաւերով և ոչ ոքին չէ կարոդանում յայտնել. ճարահատեալ ամենայն օր գընում է եկեղեցի և Աստուծուն աղաչում, պաղատում, որ նա պատժի աղա Գուլամեանցներին:

—Եթէ ճշմարիտն էք ուզում իմանալ, մի հատ գործակատար էլ անպատիժ չի մնայ,—մէջ մտաւ մի ուրիշը:—Ինչ որ վաճառականն է անում, նոյնը և սովորում ենք. որ մէկը մեզանից կարող է պարծենալ, թէ իսկապէս ճշմարիտ մարդ է—ոչ մէկը. ամենքս էլ ոտից մինչև գլուխ թաթախված ենք մեղքի մէջ: Օրը հարիւրաւոր ստեր ենք ասում մուշտարիների առաջ, խաբում ենք, կտորները պակաս ենք չափում, արժողութիւնից աւել գներով ենք ծախսում, մի խօսքով հազար տեսակ սատանայութիւններ ենք անում, թէ ինչ է մեր աղան պիտի օգտվի: Բայց աղան սրա փոխարէնը ինչ է տալիս մեզ. նա մեզ սովորեցնում է աւելի ու աւելի խաբեբայութիւն, խորամանկութիւն, կեղծաւորութիւն: Մինչև այսօր մեզանից մէկը մաքուր սրտից խօսել չէ կարողացել Մակար աղայի հետ, մինչև այսօր մեզանից ոչ մէկը նրա հետ խօսելու ժամանակ չէ կարողացել ասել այն, ինչ որ մտածում է: Ամենքս խօսում ենք մի տեսակ, իսկ մտածում ենք ուրիշ տեսակ. ամենքս կեղծաւորում ենք, շողոքորթում ենք նրան դուր գալու համար: Մեր ստրկութիւնը այն տեղն է հասել, որ եթէ Մակար աղան ասի, թէ ուրբաթ չէ, այլ կիրակի է, մենք կը համաձայնենք, չը նայելով որ գիտենք, թէ նա սուտ է ասում. եթէ ասէ, որ արեգակը լոյս չունի, մենք կասենք թէ ճշմարիտ է. եթէ ասէ, որ երկու անգամ երկու չորս չէ, մենք իսկոյն կը պատասխանենք թէ հայո, Մակար աղա, ձեր ասածն է»: Ինչու համար ենք այդ բոլորը անում, նրա համար որ մենք նրա քէֆին չը դիպչենք, որ սրանով մենք ցոյց տանք նրան մեր հնազանդութիւնը, խոնարհութիւնը, որպէս զի գրաւենք նրա հաւատարմութիւնը: Միթէ այս բոլորը խաբեբայութիւն չէ, միթէ պակաս յանցանք է, քան թէ աղա Գուլամեանցների և պառաւ Թոթովեանցի աւազակութիւնը:

(Կը շարունակվի)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շատ ՁԵՌՆՏՈՒ գնով ծախվում է **ՏՈՒՆԸՍ** և նրա մօտի ԱՑԳԻՆ, որ գտնվում է Նախիջևան գաւառի **ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ** մէջ և որ պատկանում է ինձ, նոյն գիւղի բնակիչ ՄԵՀՐԱԲ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻՆ։ Խնդրում եմ պ. պ. ցանկացողներին դիմել ինձ այս հասցէով, **ԱԳՈՒԼԻՍ**, ՄԵՀՐԱԲ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻՆ։

1—3

Ծանուցումներ

Առաջնորդական յանձնարարութեանց ցանձնաժողովը յայտնում է Տփխիսի թեմի բոլոր եկեղեցիների Մեծ. երեցփոխաններին որ համաձայն բարձրագոյն հաստատված կանոնադրութեան 122 յօդուածի, երեցփոխական պաշտօնավարութիւնը լինում է երեք տարի ժամանակով (նոր ընտրութեան ժամանակ երեցփոխանը կարող է վերընտրելի լինել)։ ուստի այն երեցփոխանները, թէ Տփխիսի և թէ նրա վիճակի, որոնք լրացրել կամ լրացնելու մօտ են իրանց եռամեայ ծառայութեան շրջանը, հրաւիրվում են երկու ամիս առաջ զրաւոր յայտնելու մերձաւոր հոգևոր իշխանութեանը, որ կարգադրութիւն անի նոր ընտրութեան մասին։ ցանձնաժողովը արդէն մշակում է երեցփոխանների համար պէտք եղած հրահանգը և յոյս ունի շուտով հրատարակելու։

Անդամ յանձնաժողովի՝ ցարութիւն աւագ քահանայ Սուքանաճեանց

Քարտուղար Եղնիկ քահ. Երզնկեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Սօլօլակում Պրիկազի պարտքով երկու քարաշէն ՏՆԵՐ, շինութեան թիւք, ԱՑԳԻ, ջրով, ախոռատուն, ՀՈՂ. 435 սաժէն և ԱՌԱՆՁԻՆ 130 սաժէն։ Հասցէն. Միխայլովսկայա փողոց, հիւանդանոցի հանդէպ, տուն Ալիխանովի № 87, ԿԱՄԱԵՎԻ բնակարան։

3—3 (Հ. Հ. Հ.)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ Երևանեան հրապարակի վրա քաղաքային տան մէջ խանութների չինութիւնը կը վերջանայ մինչև 1884 թուականի յունվարը և այդ պատճառով ցանկացողներին վարձել այդ խանութները հրաւիրում է հիմիկուց յայտնել, որպէս զի վերջացնելուց յետոյ խանութները փոփոխութիւնների չենթարկվեն։ Կարելի է յայտնել քաղաքային վարչութեան մէջ ամեն օր մինչև ժամի 2-ը։

2—3

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ** տեղը կան ամենի համար մեծ **ԳՐԻՉՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, գմուռ, ՄԱՐԻՉՆԵՐ, պենալ, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, սներ, ԲԱԶԿԱԹՈՌ-ՐարկՈՒ կախելու ՏԻՆԵՐ, անոտներ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐ-ՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շէհօտակալների, երկաթէ թելերից, ձիու համար։ Մահկենաօշներ։ բժշկական թղթի վատերկլօզեթի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

95—100

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, որ ներկայ նոյեմբերի 18-ին, 12 ժամին, իր ներկայութեամբ լինելու է ամուրդ հետևեալ քաղաքային հողերը կապալով տալու համար։

1) Հալաբարի հողերը 229 դեսեատին 1560 քառ. սաժէն չափով գաղ պատրաստելու համար, 1884 թ. յունվարից մինչև 1887 թուականի յունվարը։

2) Կուկիայի հողեր 888 դեսեատին 1800 քառ. սաժէն վարուցանքի և ուրիշ տնտեսական պարապմունքների համար ներկայ տարվայ դեկտեմբերի 1-ից երեք տարի ժամանակամիջոցով։ և 3) Նաւթլուխի հողեր 194 դեսեատին 100 քառ. սաժէն արօտատեղի և պարտիզային բոյսերի համար 1884 թ. յունվարի 1-ից 1887 թ. յունվարի 1-ը։ Պայմանները կարելի է տեսնել փորձութեան մէջ 8—2 ժամը ամեն օր, բացի տօներից։

2—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ «Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.»

Չորեքշաբթի, նոյեմբերի 9-ին հասաւ ՓՕԹԻ **MEUSE (ՄԵՕԶ)** շոգենաւը, որի նաւապետն է ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) և ՓՕԹԻԻՑ կը վերադառնայ ՏՐԱՊԻԶՕՆ, Կ. ՊՕԼԻՍ և ՄԱՐՍԵԼ չորեքշաբթի օր, 16-ին նոյեմբերի, իսկ ԲԱԹՈՒՄԻՑ ուրբաթ օր 18-ին նոյեմբերի եթէ եղանակը նպաստաւոր լինի նաւադնացութեանը։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին. Փոթիում պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Բաթումում պ. ՀԵՔԻՄԵԱՆՑԻՆ և Թիֆլիսում պ. ԲԸՆՕԻՆ, Արծրունու գալէրէայում, № 194

4—5

„ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ" վարչութիւնը խնդրում է ընկերութեան յարգելի աշխատակից-անդամներից, որ բարեհաճեն հաղորդելու վարչութեան մինչև առաջիկայ դեկտեմբերի 1-ը ընկերութեան վերաբերեալ կարևոր տեղեկութիւնները։

փոխ-նախագահ՝ Գ. Աքիմեանց։

Ատենադպիր՝ Գ. Շահբուդաղեանց

3—3

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՒ, զանազան ամթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական ամթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոդաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաններ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կոֆէյնիկ, թէյամաններ, ուլթոներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դգալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՑԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ ռէվօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. ԹԷՅ Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՅՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիտներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ լայաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում ես ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**

76—100

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

լրագրական գործակալութեան գրաւաճառանոցում

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Բաժանորդագրվում են ամեն տեսակ պարբերական հրատարակութիւններին, ինչպէս տեղական, Ռուսաստանի, նոյնպէս և Արտասահմանեան։

Հասցէն։—Тифлисъ. въ Газетное Агентство В. Шавердова.

4—10

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն

83—100

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ՝ ՏՈՒՆ ԹԱՅԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղլուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցեր, ոսկէ և արծաթէ։ Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն։ Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ դգալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով։ Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса)։ Ընդունում է պատուէրներ օտարքաղաքներից ամեն տեսակ ապրանքների։

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова. ՄԱՆԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.